

Մ Ձ Ո Յ Ա Ձ Խ Ա Ր Հ *)

Լ Օ Ր Ի Կ Ն Ե Ր

Լօրիկ կոչուած ժողովուրդը Բոշայներու և առաւել
ևս գնչուներու (2ինկեան) նման ժողովուրդ մէ՛ թէ կե-
նօք, թէ արհեստով և թէ բարբով:

Գեանքերնին աստանդական է միշտ և շատ թշուառ.
գարնան սկիզբէն մինչև աշնան վերջերը կը պտըտին շատ
հեռաւոր տեղեր, վրան չեն գործածեր, և այս ճանա-
պարհորդութեան մէջ իրենց բոլոր կերակուրը համարեա
թէ մուրալով կը հոգան:

Խրաբանչիւր ընտանիք տեղէ տեղ փոխադրուելու
համար կ'ունենայ երկու կամ երեք էշ, որոց վրայ կը
բառնայ իր ունեցած բոլոր հարստութիւնը, այն է՝ քանի
մը թաղքի, կապերտի, և եթէ ունի՝ պատառոտուն վեր-
մակի կտորները, անոնց վրայ ալ մանր տղայք կը հեծ-
նին, որոնք քաջաւարժ են մուրալու:

Ասոնց արհեստը ընդհանրապէս մազ շինել է, որուն
նիւթերը Գարնոյ և Նարմանու կողմերէն առատապէս հո-
գալով՝ հետերնին կը պտըտցնեն: Ջատերու մանր տղայք
և պատանիք կաքաւող (քօչէք) են և իրենք ալ ջութակ
(քէմենչէ) չալող. շատերն ալ հետերնին արջ, կապիկ,
այծ, և վարժուած էշ կը պտըտցնեն՝ զանոնք խաղցնե-
լով ստակ կամ ցորեն ժողովելու: Ասկէ զատ ձեռնածու-

*) Տես «Լուսոյ» Բ. տ. գիրք Ա.

Թիւններու ալ վարժ են. կանայքն ալ հմայութեանց և գուշակութեանց խաբէական ձևերուն մէջ յաջողակ, որոնք գլխաւորապէս ոչխարի բէճի ոսկրի վրայ նայելով կը կատարեն իրենց արհեստը: Զէնք գործածող չեն, սակայն գողութեան վարժ են թէ արք և թէ կանայք, շատ տնե-րու վնասներ հասուցեր են, ուր որ կամ տանուտէրը չէ գտնուած և կամ տղայ միայն գտնուելի է՝ իրենց մուրա-լու սլատրուակաւ տնէ տուն շրջած ատենը:

Արք և կանայք թխադէմ են սևի մօտ, նիհար և տկար կաղմուածքով և կարի տգեղ: Կանայք ամենն ալ ճակատնին և երեսնին կը կիտեն (տխն), ոմանք կուրծքերնին և ձեռքերնին ալ կիտուածներ կունենան, ինչպէս իրենց արանցմէ ոմանք ալ. և այս սովորութեամբ կը յայտնեն կերպով մը իրենց հարաւային ժողովուրդներէն և յօրեստանցի ըլլալը: Ունին առանձին լեզու որով մէկ մէկու հետ կը խօսին, բայց ուրիշ ազգաց հետ քրդերէն կը խօսին: Զգեստով ըրայէ քրդաց աղբատներուն մօտ են, ապրուստնին խիստ թշուառ, բայց սովոր ըլլալնուն բան չեն զգար: Գրծնրով մահմէդական են, իրենց մէջէն կարգացող երբէք տեսնուած չէ: Ասոնք ալ մեծաւ մասամբ քրդերու բնակակից և անոնց աշխարհամարին մէջն են: Ասոնց խոշոր նուագածունները քրդաց բանաստեղծները կը համարուին, որոնց Աշուղ կ'անուանեն և կենդանի խաղցընողներուն ալ Մըթըռլ անունը կ'ուտան:

Այս ժողովուրդը վաղուց հայաստան մտած կ'երևի, սակայն ասոնց մէջ հայ արիւն խառնուած երբէք չը նշմարուիր, և զարմանք է, որ այս անգոր ժողովուրդը այսչափ ժամանակ իր ազգութիւնը անխառն պահեր է:

Թ Ո Ւ Ր Ք Ե Ր

Քրդերու վրայ այս չափ մը խօսել է յետոյ՝ քիչ

մ'ալ թուրքերու վրայ խօսինք: Թուրքերը կը բնակին Մուշ և Բաղէշ քաղաքաց և Խլաթայ Խարապա-ձէհրի մէջ միայն, և խառնուորդ մը կ'երեկին ասոնք զլխաւորապէս հագարացւոց, թուրքաց, թիւրքմենաց, քրդաց և կրօնափոխ հայոց, և կը յիշեցնեն մեզ յիշեալ ազգաց աշխարհաւեր արշաւանքները, որոնք արեամբ ողողեցին այս աշխարհը շատ անգամ:

Այս ժողովրդեան թիւը հազիւ 5000 տան կը մօտենայ. բնութեամբ ընդհանրապէս քրդաբարոյ են, յոխորտ, սնապարծ, դգեստուց չափաւոր, գեղխ, մոլեռանդ են չափազանց, բայց ոչ բաջ՝ քրդերու նման: Հայոց հետ վարմունքնին լաւ չէ՝ և միշտ սպառնալիք կը տեղան անոնց վրայ....

Մշոյ և Բաղիշոյ աղբատ տաճիկներ պարտիզականութեամբ և ծխախոտ տնկելով կը զբաղին. ոմանք ալ ժանտարմայ, այգեպան, իշապան ու ձիապան են. քաղաքամիջի արհեստներով չեն զբաղիր: Բաղիշեցւոց մէջ բաւական վաճառական կը գտնուի և չափաւոր ճարտար են. սակայն Մշեցւոց վաճառականութիւն միայն ծխախոտի և գեղեր (իթիզամ) ընելու վրայ է ընդհանրապէս: Իսկ խլաթցիք ամենքն ալ պարտիզական և երկրագործ են. և շատերն ալ Տրապիզոն կ'երթեկեն և բեռնակրութիւն կ'ընեն հոն: Ասոնք չափաւոր բարեբարոյ են, թերեւս բըրդերէն շատ նեղութիւններ կրած ըլլալնուն համար:

Այս թուրքերու մէջ քաղաքակրթութիւն և ուսում մտած չէ. նախապաշարմանց և կախարդութեանց կ'անսան չափազանց: Տէրութեան ծանօթ և ուսմամբ կամ բաղադրադիտութեամբ նշանաւոր անձինք երբէք չ'կան. բայց սակայն մեծ ցաւ է որ այս վիճակի մարդոց ձեռքն է այս ազնիւ երկիրը, որ գիտես թէ օրէ օր կը խոպանանայ քան թէ կը շինուի. և կերպով մը ասոնց յանձնուած է այս բազմաթիւ աշխոյժ ժողովուրդը՝ որ օրէ օր

կուրութեան, աղքատութեան և թշուառութեան կը մատնուի, վասն զի ասոնց առաջնորդութիւնը այսչափ օգուտ կրնայ բերել:

Այս ժողովրդեան մէջ կարգ մը մարդիկ կան, որոնք ոչ ցեղի ազնուութիւն և ոչ ուրիշ ձիրք մը ունին, սակայն ինչ և իցէ կերպով Միւտիւր և Աղայ գտնուեր են և քիչ բացառութեամբ անփոփոխ իրենց պաշտօնը կը վարեն իւր ուխտեալ ընկերութիւն մը, և իրենց ազդեցութիւնը յարմար պարագայից մէջ միշտ իրենց շահուն և երկրին միասուն կը գործածեն. ոչ լրագիր կը կարդան և ոչ իսկ լրագիր անցնելէ կ'աղնածեն. եկող Միւթեսարըքներու հետ յարմարելու կերպն ալ սովորած ու բաջավարժ են:

Ասոնց մէջ հին երեւիլի ցեղեր չ'կան, միմիայն Աշատին Պէկի տունը կայ որ երկրին կը տիրէր երբեմն, և որոնք քաջասիրտ և յաղթող մարդիկ եղած են. իսկ հիմա գրեթէ անգործ և աննշան են երկրին մէջ և քիչուոր. սակայն ասոնց ցեղի հնութիւնն ալ հազիւ թէ դար ու կէսէն աւելի ըլլայ:

Ասոնց մեծը որ քրդաց Պլպեսցի ցեղէն եղած է, ինչպէս կը պատմեն, Մուսուլի կողմերէն եկած ու հետզհետէ իր սերունդը զօրանալով միայն Մշոյ քաղաքին ու դաշտին տէր եղած է՝ քրդերու Բաղէշ նստող մեծ Խանին հրամանաւր. և յետոյ Ալատին Պէյ Բաղէշն ալ գրաւելով՝ տէրութեան դէմ ապստամբեր է. և Մանրավանից մօտ Արածանիի եղբրը գտնուած ոսպնջուրի ծայրի բերդէն պատերազմելով՝ վերջապէս յաղթուեր և հնազանդեր է, առանց երկիրը ձեռքէն կորսնցնելու, զոր իր յաջորդներն ալ մինչև Չէրիֆ պէյ (1848) կառավարեցին և լի ու լի լլկեցին. Թէպէտ եղեր են մէջերը հայասէր և հայրենիք պաշտպանող քաջ իշխաններ ալ, սակայն շատերն ալ շատ նեղութիւններ հասուցեր են ազգին և ա-

նոր առաջնորդներուն ու եպիսկոպոսներուն և անոնցմէ ոմանց ալ արիւնը թափեր են անմեղ տեղ։ Ասոնց վրայ այսչափ մը խօսիլ բաւական համարելով՝ անցնինք թիչ մալ Պալազցւոց վրայ խօսելու։

Պ Ա Լ Ա Գ Ց Ի Ք

Կ'արժէ որ այս ժողովրդեան վրայ քիչ մը ընդարձակ խօսինք, ըստ հայ պատմագրաց՝ անոր ծագումը, գաղթականութիւնը և անցեալ փառքը յայտնելով, նաև հայաստանեայց մատուցած ծառայութիւնները և տուած վնասները, կրօնքը, բարքը, քաջութիւնը, ուրիշ ամեն հնութիւններով մէկ տեղ. և ապա իր ներկայ վիճակն ալ նկարագրենք։ Թէպէտ այս ամենը ներհուն անձանց և քաջ գրիչներու գործ է, բայց բանի որ անոնք կը լռեն և իրենց պայծառ գիտութեամբը չեն ջահաւորեր հայրենեաց միջին խորշերը, մենք անոնց վրայ գէթ աղօտ նշոյլ մը ձգելու չ'դանդաղինք, որպէս զի քաջաց ճանապարհ բացուի։

Պալազցի կոչուած ժողովուրդը կը բնակի Սասնոյ և Խուլթայ գաւառները, ուր հաստատուած են մեր հայկազուն Պարոյր թագաւորի օրով ու անոր հրամանաւ։

Ասոնց առաջնորդն ու նահապետը եղած են երկու երիցագոյն որդիք Սենեքերիմ Ասորոց թագաւորին, Ադրամելէք և Սանասար կամ Սարասար, որոնք ինչպէս Աստուածաշունչի մէջ ալ մէկ երկու տեղով կը պատմուի, իրենց հայրը իր կռատանը մէջ սպաննեցին՝ երբ Երուսաղէմէն կորանքով դարձած և մտադիր էր իր որդիքը կռոց պահել ու նորէն Երուսաղէմի վրայ արշաւելու, և երկու եղբարք անմիջապէս կը փախչին և ինչպէս Թովմայ Արծրունի պատմիչը կ'ըսէ, բուն գնդաւ կուգան ու Սիմ լեռը կը մանեն. հոն իրենց աղխը թողնելով՝ ան-

ձամբ կը ներկայանան Պարոյր թագաւորին անոր պաշտպանութիւնը խնդրելու։ Այս դէպքը Յով. Գաթ. պատմաբանն ալ կը յիշէ Պարուրայ գործոց մէջ. սակայն Խորենացին թերեւս վրիպակաւ մը Պարուրայ Հայր Սկայորդւոյն օրը եղած կը ցուցնէ։

Թովմա Արծ. կը պատմէ թէ Հայկազն Տիգրանին օրով այս գաղթականութիւնը իր հայրենասիրական ու տիրասիրական գործերով մեծ պատիւ դտաւ Տիգրանէն, ինչպէս գտած էին նաեւ Պարոյրի օրով. սակայն իրենց ծայրագոյն փառքը Վաղարշակ Պարթևի թագաւորութեամբը պսակուեցաւ ու փայլեցաւ։ Վասն զի Վաղարշակ Աղձնեաց բղբշխութիւնը որ Հայոց չորս բղբշխական կողմնակալութեանց մէկն ու դրեթէ թագաւորական ճոխութիւն մ'էր, Սանասարայ տղոց յանձնեց՝ բղբշխական ցեղ մը մէջերնին հաստատելով. և Ադրամելէքի ցեղէն ալ հրկու նախարարութիւն հաստատեց Արծրունիք և Գնունիք անունով ու զանոնք իրեն պաշտօնեայններ կարգեց։

Այս Արծրունեաց ցեղն ու Գնունեաց, որ կը բնակէին ըստ հաւանականութեան՝ հին ընդարձակ Մասուն գաւառի արևելեան հարաւային մասին մէջ եղած արդի Արծուիք գիւղը, որ հիմա Մօտգանայ մաս կը համարուի, այն մեծ գաղթականութենէն զատուելով Արշակունեաց ատենները՝ բնակեցան Վասպուրականի Տոսք և Առքերանի գաւառաց մէջ, ուր ցայսօր կը գտնուի Գնունեաց հռչակաւոր բնական ապառաժ ծովեզերեայ բերդն, անմատչելին և Անառիկն Ամիւկ։

Այս երջանկայիշատակ նախարարութիւնները ազգին հետ միանալով մինչև 'ի սպառիլ իրենց ազգատոհմին՝ կրօնի և ազգին մեծամեծ ծառայութիւններ ըրեր ու Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ շքեղութիւնը և Հայրենեաց փառքը աւելցուցեր՝ և իրենց անունն անմահացուցեր են։

եկեղեցւոյ և ազգային տարեգրութեանց մէջ՝ միանգամայն հայրենեաց երախտագիտութիւնը իրենց ձգելով։ Թէև հռչակաւոր աշխարհաւեր Մերուժան մ'ալ մէջերնէն ելած է։ Բայց բիւրաւոր անուշահոտ վարդերու մէջ ալ բանի մը փուշ չ'զտնուիլը անհնարին է։

Ազգային պատմութիւն և վարք սրբոց կարդացողներուն յայտնի է Ատովմեանց անվեհեր բաջութիւնը և քրիստոնէական համարձակութիւնը Յազկերտ Բ ի օրով և հայաստան հասնելով Աստուածային տեսլեամբ զմայլելով՝ իր ծաղկահասակ որդւոյն ու ամբողջ Գնունի գնդով նահատակուիլը։

Նոյնպէս և Արծրունեաց Վասպուրականի մէջ դար ու կէսի մօտ բաջութեամբ թագաւորելը և հայրենասիրական աշխարհաշինութիւնները մինչև Սննքերիւմ, և ապա Մեղաստիւր փոխադրուելով՝ այն հայրենասէր ազնիւ ցեղին քիչ ժամանակի մէջ այն տեղ անհետանալը, և միւս ճիւղին ալ իւր բնիկ հայրենեաց, Վասպուրականի մէջ սպառելը, զորս շարունակողն Թով. Արծրունւոյ լի ու լի կը պատմէ։

Իսկ Սանասարայ որդիքը որոց յանձնուած էր Աղձնեաց բզեշխութիւնը և Միջագետք՝ հարաւային ուրիշ երկիրներով մէկ տեղ, որ Արծրունեաց իշխանութենէն խիստ մեծ էր, և իրենց երկիրը ընդարձակ և մարդ. և հայաստանի ամենէն ամուր աշխարհներէն մէկն ալ խիստ բազմաթիւ ու զազանամարտ բնիկ զօրքերով իրենց յանձնուած. կրնային Ադրամելէքի որդւոցմէն շատ մեծ ու օգտակար ծառայութիւններ ընել զիրենք ասպնջականոց ազգին և հայրենեաց, և անով հայաստանի ու իրենց փառքը բարձրացնել։ Սակայն միշտ հակառակը գործած են, միշտ ազգէն հեռու ապրած են՝ առանց սերտ միաբանութիւն մը ունենալու, և միշտ հայաստանի թշնամեաց՝ մանաւանդ Պարսից հրապուրանացը անսալով՝ փառասիրութեամբ վառուած ապստամբութեան դրօշ պարզած են իրենց բարերար ազգի և պաշտպան հայրենեաց

դէմ, և Հայաստանի թշնամեաց առաջնորդ և գործակից ըլլալով մեծամեծ ու անդարմանելի վնասուց պատճառ եղած են՝ իրենց ապստամբասէր ապերախտ բարքով ինչպէս կը տեսնուի Ագաթանգեղոսի, Խորենացւոյ, Բիւզանդայ, Նիկիէի և Փարպեցւոյ մէջ։ Սրբոյն Տրդատայ, Փոքր Խոսրովու, Արշակայ Բի, Պապայ, Վարդանանց և Վահանեանց ատենները, որ միշտ դաւաճան և անկարեկիր գտնուած են ազգիս։

Ասոնք որ Մանասարի անուամբ Մասնեայք կը կոչուին, թէև Սրբոյն Տրդատայ ատենները քրիստոնէութիւնը ընդունեցին, բայց սակայն երբէք կատարեալ պրտույ մը չ'տուին ոչ քրիստոնէութեան և ոչ ալ զիտութեան ու կրթութեան։ Ոստիկանութեան վերջին տարիները ազգին և Հայրենեաց ծառայութիւն մը ընելու փորձով, կամ ուղիղ եւս ըսելով՝ ձախորդ տիրասիրութեամբ արշաւեցին Ապուսեթայ վրայ և զանիկայ Տարօնոյ Մուշ քաղաքին մէջ սպանեցին, իբր Բազարատ Բագրատունւոյ՝ իրենց իշխանին վրէժխնդրութեանը համար, որով թէև առ ժամն անուն ըրին, բայց անգութ Բուդայի զաւստեան, Բազարատի գերեկիցները շատցնելու և Հայաստանը արեամբ ողողելու պատճառ եղան իրենց անմիտ խռովասիրութեամբը։

Բագրատունեաց թագաւորութեան վերջերը ասոնց վրայ կ'իշխէին Մասնոյ Մամիկոնեան մեծ իշխանները, Թոռնիկ, Ճորտուանէլ և Վիգէն, որ կը նստէին Մասնոյ արևմտեան հիւսիսային սահմանը Ամուշատ քաղաքը։ Տիգրան և Ապլասաթ ալ որ Ռուբինեանց դարուն սկիզբները և անոնց նիզակակից էին, այս Մասնեաց Հայ իշխանները ըլլալ կ'երևին։ Թով. Արծ. պատմիչը զասոնք գռեհօք Ասորոց, Մեկնազէնք և սուրհանդակք Խուժայ կը կոչէ՝ Ապուգեթի պատմութեան մէջ, զոր Յովսէփ կամ Յուսուփ կ'անուանէր, երես 134. ուր և իրենց բարբը,

կեցութիւնը և այլն կը նկարագրէ լիովին. և հիւրասէր, դադանաբարոյ, արիւնարբու, բարբ և խօսք խրթնի՝ կըսէ: Յով. Կաթողիկոս այլ Աղխատրոյձ բնակիչք կ'անուանէ զասոնք. և այս յատկութիւնները իրենց վրայ ցարդ անփոփոխ կ'երևին:

Ասոնց արդի վիճակը ետեղակալ գիւղաբնակ են ցիրաստանդ, և կոշտ երկրագործութեամբ կ'ըզբաղին միայն կորեկի և կըլկըլի տեսակներ կը մշակեն և կ'ուտեն:

Ասոնց հին անունները որ Սասնեաք և Խոյթք էր, հիմա իրենց չ'պատկանիր, Սասնցի կը կոչուին Սասնոյ քրդեր և Խուժեցի կը կոչուին միայն Խուժայ քրդեր. իսկ իրենք ինքզինքնին կը կոչեն Պալաքցի, ինչպէս նաև ամեն ազգեր ալ. Պալաք այս երկրի բարբառով (Ալաճա)՝ ըսել է, և այս անունը Պալաքցւոց դրուելուն պատճառը կը կարծուի թէ իրենց կրօնական վերջին հանգամանքէն առաջ եկած պիտի ըլլայ, որովհետև հայը կը կարծէ թէ Պալաքցին Քուրդ ու Մուսուրման է. Քուրդն ալ կը կարծէ թէ՝ հայ ու ծածուկ քրիստոնեայ է. ահա իրենց այս կրօնական անստոյգ վիճակի նկատմամբ Պալաքցի (Ալաճա) կոչուած պիտի ըլլան կամ Ադրամեղէք բառի Մեղէք մասէն. և ոչ թէ՝ ինչպէս իրենք առանց բան մը գիտնալ և յայտնելու այլ ընդայոյ կ'առասպելաբանեն իրենց նախնիքը երկու պալաք սկունդ համարելով:

Պալաքցիք 11 ցեղերու կը բաժնուին, որք են Պտրցիք, Չախլոքցիք, Չեկոյեանք կամ Շեկոյի տուն, Մուսեցիք, Զաքարցիք, Նորշէնցիք, Սառմըցիք, Իսրամցիք, Ճալալցիք, Աղապոյ տուն և Փսենոյ տուն. որոնք ամենը մէկէն 2000 ընտանիքէն աւելի են. և դարձեալ Խոյթ և Սասնոյ սահմանակից՝ անոր արևմուտքը Խարզանք 1)

1) Խարզանք գաւառը Մուշ չէ. Տիգրանակերտի կուսակալութեան և սերթ լիվային կը պատկանի:

(Արզն) գաւառներու մէջ Հայոց հետ խառն կը բնակին. և 11 ցեղը 11 իշխող հին տներու կը հնազանդին:

Պալարցւոց բրիստոնէութիւնը ձգելուն պատճառը այսպէս կը պատմուի: Վերջին դարերս այս երկիրներու մէջ բրիստոնէութեան տկարացած ատենը այս ժողովուրդը, ինչպէս ուրիշներն ալ, տիրող բռնաւորներէն ստիպուեր է կամ իր կրօնը և կամ իր զէնքն ու ազատութիւնը ձգելու, և ինչպէս իրենք աւանդութենէ առնելով կ'ըսեն, թէ «մեր նախնիք զէնքը չեն ձգած՝ ազատ մնալու փափագով, և առ երեսս կրօնքը ձգեր են՝ դանիկա ծածուկ պաշտելու և վտանգէ ազատուելու յուսով»: Բայց սակայն անոնց այս յոյսը 'ի դերև ելած է ժամանակին սաստիկ հալածանաց և խտրութեան պատճառաւ. թէև մոլլաներէ և շէյսերէ ազատուեր են վերջապէս, բայց բրիստոնէութենէ ալ զրկուելով՝ անկրօն մնացած են ցայսօր, բարոյապէս և նիւթապէս ալ խիստ ողորմելի վիճակի մէջ:

Եւ ինչպէս շատերը կը պատմեն, ասոնց այս թշուառութեան մէկ մեծ պատճառն ալ Հայ քահանայից տղէտ աններողամտութիւնը եղած է. որոնք այս վշտակիր ժողովրդեան ձայնին մտիկ չ'ընելով հեռու կը փախչին եղեր, եկեղեցւոյ փրկարար խորհուրդները անոնց իբր անարժաններու մատակարարել խնայելով՝ անգամ մը առ երես ուրացած ըլլալնուն համար: Բայց սակայն հեռու փախչելով ալ չ'էին ազատեր. վասն զի այս թշուառ սըրտաբէկ ժողովուրդը շատ անգամ շատ քահանաներէ զինու բռնութեամբ պահանջեր է այն հոգևոր մխիթարութիւնները, զոր իրենք կը զլանային՝ սիրով մատակարարել. և մկրտութիւն, ննջեցելոց յիշատակ և այլն կատարել տալէ զկնի՝ իբրև նուէր մօմ, բամբակի մանած և այլն տալով՝ տեղերը կը դարձնէին զանոնք: Այս սովորութիւնն ալ վերջերս դադարել սկսած և իսպառ վերջանալու մօտ է:

Իրենց երկրի սահմանակից տեղեր և երկրին մէջ գտնուած ամեն վանքերուն՝ մանաւանդ Մշոյ սուրբ Կարապետի, Գոմաց և սուրբ Աղբերկայ վանորէից մատաղացու և ուրիշ նուէրներ առատ կը նուիրեն:

Կը պատուեն Հայոց ամեն շէն և աւերակ եկեղեցիք և եկեղեցականները: Սուրբ Աղբերիկը և Գոմաց վանքը իրենց հայրենի վանորայքը համարելով՝ յաճախ ուխտի կ'երթան բազմութեամբ. եկեղեցւոյ մէջ պատկառանօր և լուսթեամբ կը կենան. խաչահամբոյր սրբոց մասանց, ընծայարեւութիւններ և մատաղ ալ յաճախ կ'ընեն: Մարաթու լեռն ալ, ուր աւերակ վանք մը կայ, մեծ բազմութեամբ ուխտի կ'երթան Հայոց հետ մէկ տեղ:

Ուրիշ կերպով մ' ալ կը պատմեն ասոնց քրիստոնէութենէ ետ կենալը: Մարաթու լեռան ստորոտը Հաթնու աւերակ վանք մը կայ. ասոր վանահայրը Պալաքցւոց նախահայր Պետոն (կ'երեւի թէ միայն Պտրցւոց նախահաւն ըլլայ, և ոչ թէ ամբողջ Պալաքցւոց), օրինազանցութեան մը պատճառաւ եօթը տարի բանադրանաց տակ կը պահէ: Յիշեալ Պետոն վանահօր աններողամիտ ընթացքէն յուսահատելով իր եօթն որդիներով իբր Մահմէդականութեան կը դիմէ, ու վերջը արդի անկրօն վիճակին մէջ կը մտնեն:

Այս ամեն ցեղերը որքան որ քրիստոնէութիւնը ձգեր են, այսուամենայնիւ մահմէդականութիւնն ալ ընդունած չ'են. ոչ թրվատութիւն ունին, ոչ աղօթք, ոչ ծոմապահութիւն և ոչ ուրիշ ծէսերու կատարում: Միայն թէ այս քանի տարուանս մէջ՝ իրենց մեծերէն ոմանք ՚ի հաճուկս կառավարութեան սկսեր են իսլամութեան մօտիկութիւն մը ցուցնել՝ իրենց ապստամբ դրութեան մէջ պատիժէ ազատ ըլլալու նպատակաւ: Թէև իրենց կողմերը գտնուած չէյսերն ալ բաւական ջանք ունին այս ժողովուրդը Իսլամ ընելու, բայց ժողովուրդը անտարբեր է: Պալաքցիք

շատ անգամ քուրդ Աշիրներու հետ մեծամեծ կռիւներու բռնուած են ու կը բռնուին. և որքան անհաշտ թշնամի են քրդաց հետ, այնքան աւելի սիրով և համակրութեամբ կը վարուին Հայոց հետ. միայն թէ իրենց մէջ եղած Հայերէն (խաֆիրութիւն) կ'առնեն՝ ինչպէս որ քրդերն ալ, և եթէ մէջերնին վէճ մ'ալ պատահի՝ միայն այս պատճառաւ կ'ըլլայ. Վերջապէս Հայութեան ամեն ինչ, (կրօնք և այլն) Պալաքցւոց հաճելի կ'երևի՝ բաց ի սորկութենէն, որուն անունէն իսկ՝ խիստ կը խորշին վայրադ աղատասիրութեամբ մը:

Պալաքցւոց ազգային անունները Հայերէն և քրդերէն անուններով ալ խառն են. զօրօրինակ, արական անունները՝ Փէրհա, Տօկուշ, Պոդօ, Քոլօս, Տահլէ, Չիկոյ, Աղապօ, Արապօ, Խըշօ, Օսէ, Մ'նօ, Խշօ, Մելօ, Չարօ, Աէլօ, Աէլիլ, Պշար, Թելի, և այլն. Իւրաքանչիւր ոք իրենցմէ երկու լեզու քաջ գիտէ ու կը գործածէ. Արաքերէն և Հայերէն. Քրդերէն ալ շատերը գիտեն. Ասոնց Հայերէնը խիստ թանձր բարբառ մէ. խիստ արագախօս են և բառերը սաստիկ չեշտելով ու կրկնելով կ'արտասանեն:

Բարբոլ ու կաղմուածքով, զգեստով ու զէնքով, հարստութեամբ և տնական կեանքով լեռնական Աշիրներէն քիչ կը տարբերին. սակայն անոնցմէ պարզամիտ են և բաւական ալ հիւրասիրութիւն ունին. Ամենքն ալ քաջ պատերազմող են. բայց ձեւալցի ցեղին րաջութիւնը, մանաւանդ արինախանձ զազանութիւնը և առ եղբարս իսկ վայրենական անգթութիւնը չափազանց է. Տէրութեան զօրք չ'են տար տուրք ալ գրեթէ նոյնպէս:

ԴԻԼՈՒՄԻ ԿԱՄ ԴԵԼՄԻԿԻ (ԶԱԶԱ ՔԻՒՐՏ):

Պալաքցիներէն ետքը կուգայ այս ժողովուրդը, որ Մշոյ լիվայութեան միայն արեւմտեան գաւառաց՝ Խանտ-

րէլի, Վարդոյի և Խնուսի արևմտեան ծայրերը կը գրտնուի քանի մը հարիւր տուն։ Ասոնք այս կողմերու Հայերէն Տըմըլիկ կը կոչուին. քիչ տեղ քրդերու հետ խառն կը գտնուին. և իրենց բազմութիւնը այս սահմանէն սկսելով քանի դէպ 'ի Փոքր Հայք յառաջանայ՝ այնքան կը շատնայ և մինչև Սերաստիոյ ու Կեսարիոյ մօտերը կը հասնի։ Կեղի, Խուզուլջան, Չար Սանճար, Տերսիմ և Տուժիք բնակող բրդերը գրեթէ ամենն ալ այս ազգէն են։ Կրօնքով ալ ընդհանրապէս (ՄուսՍօյնտըրան) աղանդաւոր են, քիչ ալ Իսլամութեան դարձածներ կը գտնուին։

Այս ժողովուրդը Տելմաստանցի է՝ Դեհրանի մօտ. ըէն այս կողմեր դադրած. և ինչպէս կ'երևի Տուղրիկ արշաւանաց ժամանակէն սկսելով։ Ազգային հին պատմագրաց մէջէն միայն Թով. Արծրունի կը յիշէ ասոնց անունը, որ իր ժամանակները սկսեր էին Հայաստանի հարաւային կողմերը արշաւել ասպատակել, և որոնց վրայ Արծրունիք մեծ յաղթութիւն մը տալած են։ Տըմըլիկներ ինքզինքնին Տըմըլի կ'անուանեն, և զՔրդերը Քրդոսի կը կոչեն։

Ասոնց լեզուն Քրդաց ու Պարսից մէջ տեղն է, և աւելի մօտ Պարսից լեզուին. խիստ համբերատար, չարքաշ և առանձնասէր են, որով երկար ատեն կրնան համբերել լեռները իրենց այծերու առանձնական գոմերու մէջ՝ ամբողջ ձմեռը միայնակ անցնելով. նոյնպէս լեռները օրերով կ'ըսպասեն ամառը՝ աւաղակութեան որս մը ձեռքերնին ձգելու։

Իրենց գիւղերը փոքրիկ և բնակութիւննին ալ շատ տեղ ցիրաստանդ է. տները ամենողորմելի և մերկ 'ի կահ կարասեաց. զգեստնին ամենախեղճ, ցնցոտի և կիսամերկ՝ թէ արանց և թէ կանանց, կերակուրնին վայրենական և խեղճ. իրենք անասնաբուծութենէ և խաշնադարմանութենէ զատ՝ և ոչ բանի մը յարմար. երկրագործութեան մէջ ամենաբիրտ, միմիայն կորեակներու և

կըլիլընհրու տեսակներ կը մշակեն և կուտեն:

Քնուլթեամբ լեռնասէր են և ազատասէր և աւաղա-
կաբարոյ. և կարի թանձրամիտ: Ասոնք ալ երկու մեծ
խումբերու կը բաժնուին՝ Աշիրներ և Ըրայէներ: Աշիրնե-
րը շատ մը ցեղերու կը բաժնուին, և իրենց մէջ իշխող
հին ցեղեր ունին, և անոնց կը հնազանդին ամեն բանի
մէջ, մինչև իսկ տէրութեան դէմ պատերազմելու ալ. ինչ-
պէս են Տէրսիմ և Տուժիր գաւառներու բնակիչք:

Տմբլիկը ընդհանրապէս լեռնաբնակ ըլլալով ձիավար-
ժութիւն չ'ունին բնաւ, զէնքերնին մէկ հրացան և մէկ
սուր է, ասպար մը ու քրդական դաշնակ մ'ալ կը գրտ-
նուի միայն այս կողմերը բնակողներուն քով: Իրենք
յանդուզն և յամառ կռուողներ են. շատ անգամ փոքրիկ
բանի մը համար կեանքերնին վտանգի մէջ կը դնեն՝ առ
աղքատութեան և կարօտութեան, որուն պրեթէ ամենքն
ալ ենթարկուած են:

Իրենց բովանդակ հարստութիւն սե այծերու վրայ
է. և հարուստ համարուածները մէկ երկու հարիւր այծ
կ'ունենան. և անոնց իւրը, պանիրը, թանհատը, մազը,
կաշին և ուրը ծախելով ապրուստ կ'ընեն:

Այս այծերը դարմանելու համար ձմեռը առանձին
գոմերու մէջ կը բնակին ամայի և ձիւնախաղաղ լեռները,
շաբաթներով մարդոց և իրենց տանը երեսը չ'տեսնելով:
Այս գոմերը շինուած են մանր երբեմն ալ մեծ ու բարձր
կաղնի անտառներու մէջ. ամառը անոնց թաւ ոստերը
կը կտրեն դեղին դիզեն, և ձմեռը այծերուն կեր կ'ու-
տան. և եղանակը (օդի) անոյշ օրերն ալ պրակի մէջ կը
թողուն որ կոնտ (ծառի կեղև) կըծեն և ուտեն: Այս
պատճառաւ ընտրած են ասոնք ալ, ինչպէս և քրդեր,
լեռնական կեանքը և կարի սակաւապէտ ու բարօրութեան
անճաշակ կենօք կ'ապրին՝ մարդկային ամեն վայելչու-
թենէ և բարեկեցութենէ հեռի: Այսչափ մը Մշոյ լի-

վայուլթեան վրայ ընդհանրապէս խօսեցնիս բաւական համարելով՝ տեսութիւններիս ամփոփենք և դառնանք բուն իսկ մեր նպատակին՝ Տարօնոյ դաշտը և անոր Մուշ քաղաքը կարելի եղածին չափ մանրամասնաբար և ճշտիւ ստորագրել, և վիճակազրկել անոնց մէջ եղած ազգային կեանքը:

ԲՆԱԿԱՆ ԴԻՐՔ ԵՒ ՁԵՒ ՏԱՐՕՆՈՅ ԴԱՇՏԻՆ.

Տարօնոյ գաւառը (Մշոյ դաշտ) ընդարձակ և խիստ տափարակ և հարթահաւասար գաշտ մ' է, արեւելեան հարաւէն ուղղապէս արեւմտեան հիւսիս ձգուած ու երկնցած, իր երկու գլուխներն ալ գրեթէ ուղիղ անկիւններով կը տրուած և չորս կողմն ալ ուղղագիծ. երկարութիւնն է 20 հասարակ ժամի մօտ. իսկ լայնութիւնը անոր մէկ հինգերորդէն աւելի ¹⁾:

Արեւելեան ծայրին բարձրութիւնը ուսկից Մեղրագետ կը բլխի, 3500 ոտքի մօտ կը համարուի Սև ծովու երեսէն. իսկ արեւմտեան կողմանը՝ ուր է Եփրատայ բազմաստիճան սահանքը, 3000 ոտք:

Տարօնոյ դաշտը իր շրջակայ դաշտերու և երկիրներու հետ հեշտեալ հաղորդակցելու համար՝ չորս Բերան կամ Անցք ունի՝ լեռնային խորոցներէ ազատ, Առաջինն է Գրգուռայ հարաւային ստորոտի դաշտաբերանը, Տարօնոյ դաշտի հարաւային արեւելեան անկիւնը՝ որ երկու ճիւղի կը բաժնուի, մէկը երկու ժամի չափ դէպ 'ի հարաւ երթալով՝ կը հասնի Սալնոյ ձորոյ Բաղէշ քաղաքը, և անկէ կը հաղորդուի Աղձնեաց հոշա-

1) Տարօնոյ գաւառին՝ շրջակայ երկրացիք Դաշտ անունը կ'ուտան. և Դաշտ ըսելով Տարօնոյ գաւառը կ'իմանան. նոյնպէս քաղաք ըսելով ալ Բաղէշը:

կաւոր Գեղեսուրի (Ասորոց ձոր)։ Իսկ միւսը Գրգուռայ ստորոտէն երկու ժամ դէպ յարեւելս երթալով՝ կը հասնի Բղնունեաց ծովու արեւմտեան ծայրը Դատուան և Թուխ գիւղերը։ Բ. Անցքն է Դաշտի հիւսիսային արեւմտեան անկիւնը, ուսկից Արածանի գետը կը մտնի 'ի Տարօն՝ Հարքէն գալով, և ուր (Չար-Պուհուրի) գետը արեւմուտքէն գալով՝ կը խառնուի Արածանույ։ Այս անցքով դէպ ընդ-արեւելս խոտորելով՝ Տարօն կը միանայ Հարքայ արեւմտեան (Խանտրէզ) վիճակին։ Իսկ դէպ 'ի հիւսիսային յարեւմուտս ուղղակի երթալով՝ Վարդօ գաւառին հետ։ Դ. Անցքն է Դաշտի արեւմտեան միջավայրը Խարապէք գիւղի դաշտաբերանը՝ որ Գէտուկ կ'ըսուի, որմով Տարօն հաղորդուած է Հաշտենից Պալունեաց (Պօկլան, Մէնիշլուժ) վիճակին հետ, և ուսկից կը բանին Բալուայ և Վարբերդի կարաւանները, Իսկ Դ. Անցքը Դաշտի արեւմտեան հարաւային անկիւնը, Եփրատայ կարկաջասահ հառանքին գետափնեայ Անցքն է, ուսկից որոտագոչ Եփրատի հետ Տարօնայ դաշտն ալ նեղ անցքով մը կը հաղորդուի Հաշտենից Գլոխիճ (Գլինճ) լեռնային վիճակին։ Այս մեծ ու լայնածաւալ դաշտը ունի և շատ մը առատաջուր ձորեր ալ, որոնք լայնաբաց դաշտաբերաններէն 2—3 ժամ կը բարձրանան դէպ 'ի լեռները, և ունին իրենց մէջ շատ մը փոքրիկ գիւղեր ու բարերեր հովիտներ։

Դաշտի շուրջը կը պարսպեն գօտևոր լեռներ, արեւելքէն Գրգուռ և Նեբրովթեան բարձր լեռները, հիւսիսէն (Քօսուրայ և Խանտրէզի) լեռները, արեւմուտքէն Քարկէոյ լեռը՝ Արածանույ պտոյտի մէջ։ Իսկ հարաւէն բազմագօտի Տօրոսի սեմական բարձր լեռը՝ մինչև Սալնոյ ձոր։

Տարօնոյ վայելչազարդ և գեղեցիկ դաշտը ունի և կարի գեղեցիկ սրտաբաց ու ընդարձակ հորիզոն մը. և ամպերէ շատ անգամ ազատ, պայծառ և աստեղազարդ երկինք մը։

ՕՂԻ ԵՒ ԿԼԻՄԱՅ.

Տարօնոյ դաշտի և իր շրջակայ լեռանց օդը խիստ առողջարար, մարուր և պայծառ է, բայց ամառը շատ չոր. վասն զի խիստ քիչ տարի ամառը անձրևային կ'ըլլայ, և երբեմն ամառնային արեւդարձէն մինչև հոկ. վերջերը հազիւ գոհացուցիչ անձրև մը կը տեսնուի, և ասիկա ինչպէս ըսեր ենք մեծ ծովերէն հեռու գտնուելուն պատճառաւ է:

Տարօնոյ դաշտը աստեղական բարեխառն կլիմայի տակ կը գտնուի արդարեւ. բայց իր տեղական կլիմայի ազնուութեամբը մեծապէս կը տարբերի իր վիճակակից շրջակայ դաշտերէն. վասն զի անոնցմէ ցած և աւելի հարաւային դիրք մը ունենալով՝ շատ անգամ անոնցմէ բարեխառն ձմեռներ ալ կ'ունենայ. և անոնց մէջ չ'անանող բոյսերը՝ իր մէջ ազատ սնունդ կ'առնուն ու կ'աճին:

Այս դաշտիս մէջ տարուան չորս եղանակները խիստ կանոնաւոր կերպով իրար կը յաջորդեն: Գարունը ընդհանրապէս Մարտի առաջին օրերը կ'ըսկսի: Յունիսի կեսէն հտըը՝ ամրան տաքութիւնը երևան կ'ուգայ, որ կ'ըսկսի դաշտը տաք մշուշով մը ծածկել. Օգոստոսի վերջին օրերէն յամրաքայլ աշունը դանդաղ առաջ կ'երթայ. իսկ ձմեռը ընդհանրապէս դեկ. առաջին օրերէն իր մառախլածին սաստկասառոյց թևերը կ'ըսկսի գետերու վրայ տարածել. և հետզհետէ լեռներն ու դաշտերը սպիտակ օթոցով մը հաստատապէս ծածկել: Եւ իր սաստիկ կետը Յունվարի առաջին օրերէն մինչև Փետր. 20-ը կը հասնի. և այս միջոցին մարդիկ գետերու վրայէն կ'երթնեկեն ձիւրով և ուրիշ կենդանիներով, բաշխիրներով, դահուկներով և քաղով՝ գրեթէ մէկ կանգունէն աւելի թանձր սառերու վրայէն անց ու դարձ ընելով:

Երբեմն կը պատահի որ ձմրան և գարնան եղանակները այս գրուածներէն 15—20 օրուան չափ կը յետաձգեն կամ կը կանխեն։ Այս միայն փորձուած է որ ձմեռը կանխած տեսն՝ դարունն ալ ընդհանրապէս կանուկս կուգայ։

Տարօնոյ դաշտի ձմեռը 3—4 ամիս է ընդհանրապէս. և դաշտի ձեան թանձրութիւնը ընդհանրապէս 2—5 թիզ, իսկ լեռները գրեթէ կրկնապատիկ, և ալ բարձրը ալ աւելի ¹⁾։ Կան տարիներ ալ որ ոչ դաշտը ձիւն կը բռնէ և ոչ գետը սառոյց. ինչպէս եղաւ 1852 և 1873 թուականաց սկիզբները։ Բայց պէտք է յիշել որ հոկտ. 25-ի և նոյ. 10-ի շուրջերը շատ անգամ սաստիկ փոթորիկներ կ'ըլլան, և երբեմն լեռները ձիւն կը նստի և կը մնայ. և նոյ. 20-ի շուրջն ալ դարձեալ փոթորիկ մը կ'ըսպասուի, եթէ դաշտը ձիւն չ'բռնեց՝ կը մնայ դեկտ. 10-ի և 25-ի շուրջի փոթորիկին, եթէ այն կէտերն ալ անցան և օդը բարեխառնէ, այն տարին ըստ փորձոյ՝ շատ անգամ բարեխառնութեամբ կանցնի. երբեմն ալ պատահած է որ ձմեռը յունվարէն սկսելով սաստկացեր և երկարացեր է։

Երբերէն ոմանք իբր քաջափորձ կը հաւաստեն թէ նոյ. ամսոյ մէջ եթէ դաշտը ձիւն նստի մնայ, նոյեմբերի վերջին քանի օր որ կայ՝ ապրիլէն այնչափ օր ելլէն ետքը ապա դաշտ կը սկնայ։

¹⁾ Կան պատմողներ, որ ասկէ իբր 65 տարի առաջ դաշտը 16 թիզ ձիւն եկեր է Մուրատ փաշայի օրով։ Ձիւն շատ եկած և ձմեռը սաստիկ ու երկար եղած տարիներ գարնան մօտիկ կարմիր ձիւն կը տեղայ և ձիւնը կը փճացընէ։ 1849 և 1874 թուականի ձմեռներն ալ կարի սաստկածիւն և երկարատե եղան. ձեան թանձրութիւն 10 թիզէն շատ էր՝ դաշտի արեւմտեան մասերուն մէջ, ուր ամեն տարի սովորաբար միւս կողմերէն աւելի կ'ըլլայ ձիւնը։

Քառասնօրեայ ձմրան մէջ (ջրին) անձրե գալը ձմրան ծանրութեան ու երկարութեան նշան կը համարին, և կըսեն (ջրին) լաւ է արին դայ՝ քան թէ անձրե. երկար պաղլուլակներն ալ ձմրան սաստկութեան և երկարութեանը նշան կը համարին: Նոյնպէս և ձմեռը արեւելեան քամի փչելը: Ձմեռը ծանր տարիներ դարուն մօտ ժամանակներ կարմիր ձիւն կը տեղայ՝ մանաւանդ լեռները. այնուհետեւ անձրե կուգայ. յետոյ ձիւնը պարզով կը սառի ամուր և զուարճ կըլլայ, և ձեան վրայ ձիով խօս ամեն կողմ կրնայ համարձակ երթացուիլ քանի որ արեւ տաքցած չէ. խիլ արեւ տաքցածով՝ ձեան երեսը քիչ մը կը կակղնայ, սակայն թիզ մը վարը վերստին խիստ ամուր է: Ձմրան ձիւները ընդհանրապէս անձրեով և հարաւային քամիով կը հալին. երբեմն կը պատահի որ մէկ օրուան մէջ անձրեւն և քամին մինչև վեց թիզ թանձր ձիւները կը հալեցընեն. և յանկարծական հեղեղներով դաշտին չորս կողմը կը ծածկուի և Արածանին ծովու կերպարանը կառնէ:

Տարօնոյ դաշտի դարնան սևութեան կարապետը ամեն տարի դաշտի հարաւահայեաց լեռնոտներէն և մանաւանդ Չխուրայ շամբի եզերքէն սկսելով դէպ ի հարաւ և յարեմուտս կը յառաջանայ և այս կերպով 8—10 օրւան մէջ բոլոր դաշտը կը սկնայ: Այս սևութեան դաշտի բարձր կողմէն սկսելուն պատճառ կրնամք համարել շամբի և անոր մերձակայ Բզնունեաց ծովու շրջիացման խոնաւութիւնը և Բաղիշոյ արդէն սեցած ցորեն փշող տաք հարաւը:

Դաշտ սեցածով անմիջապէս կըսկսի կանանչանալ. լեռնային զիւղերն ու սուրբ Կարապետի և սուրբ Յովհաննու վանքերու շուրջն ալ 8—10 օրէն ետքը կը սկնան ու կը կանանչանան:

Ապրիլ մէկէն զկնի կըսկսին օդեր քաղցրանալ: Ապ-

ըիլ 10 ին ընդհանրապէս դաշտի մէջ առատ արօտ կըլլայ, մանաւանդ եթէ աշունը շատ անձրև եկած և խոտերը աշնանէ կանանչացուցած ըլլայ:

Նորատունկ թթնիք դաշտի մէջ ապրիլ 15-ին լաւ կը պտկին (կարթնան), իսկ սուրը Գարապետի վանք 25 էն ետքը:

Ապրիլ 5-ի, 17-ի, 25-ի, մայիս 14-ի, և յունիս 10 ի օրերու շուրջը նշանաւոր փոթորիկներ կըլլան ընդհանրապէս. և այս փոթորիկի օրերու առաւօտեան ջերմութիւն բաց օդի մէջ կ'իջնայ ըստ Ռէօմիւրի $4 - 0^{\circ}$ -ի, և լերանց ծայրերն ալ բաւական ձիւն կ'ուգայ, և ոոյն ամսոց մէջ բաւական ալ կարկուտ կը տեղայ. վասն որոյ ապրիլի փոթորիկներուն ծխախոտի հայն փափուկ և դիւրադգած տունկերը բարձր ու ցուրտ հողմային տեղեր կրնան վրնասուիլ, եթէ շուտ ցանուած ըլլան:

Տարօնոյ և իր շրջապատ լերանց գարունը՝ մանաւանդ մայիսը խիստ վաղարագեղ գեղեցիկ և զուարճալի է. բայց սակայն յունիս ամսոյ սկիզբները բովանդակ ընութիւնը մանաւանդ լերանց վրայ հայետք մը ձգուած ատեն, խիստ սքանչելի տեսարան մը կ'ընծայէ այստեղ: Օդերը ջինջ զով ու պայծառ են, լերանց ու դաշտի ծաղկազարդ և գունագեղ վայելչութիւնը հրապուրիչ, սքանչելի են բազմաթիւ սահանքներու խօշիւնը և կարի ըսքանչելի արծաթափայլ սրարշաւ ուղիներու կարկաշն ու խոխոշը, որ ամեն կողմերէ կը լսուի. նոյնպէս և գեղափայլ անթիւ թռչնոց քաղցրահնչիւն դայլայիկը՝ նորափթիթ ծառոց և ծաղկանց մէջ. նաև գիշերները աստեղազարդ չքեղ երկնից պարզ և ջինջ պայծառութիւնը և ցերեկը կանաչազարդ դաշտերու երվներանգ գեղեցիկութիւնը մարդուն սիրտն ու միտքը միանգամայն կը պարարեն և կըսքանչացնեն:

Դաշտի մէջ գարուն շուտ եկած տարիներ (մարտ

1—10) խոտեր մայիս 20-ին կըսկսին քաղուիլ, մանա-
ւանդ զարունը քիչ մը երաշտ եղած ատենը։ Իսկ գարի-
ները յունիս 10 ին կը քաղուին։ Ամեն տեղերէն շուտ
քաղի կըսկսին դաշտի հիւսիսային լեռնոտները եղած գե-
ղեր՝ արեգդէմ ըլլալուն համար։ Ինչպէս են Արդերթ, Ադ-
ջան, Ապլահար, Հացիկ ևայլն գիւղերը։

Սուրբ Կարապետի վանքի ամարան ջերմութեան
բարձր աստիճանը (յուլիս 15-էն ետքը) Ռէօմիւրի 40° էն
վեր դժուար կ'անցնի՝ կէս օրուան արևի մէջ մէկ մար-
դաշտի բարձր կախելով ջերմաչափը։ Իսկ դաշտը բանի
մը աստիճան աւելի ջերմութիւն ունի, և գրեթէ միշտ
թանձր մշուշով մը ծածկուած է՝ ամարան կէս օրերէն
ետքը։ Տարօնոյ երկրին ջերմութիւնը աւելի բարձր աս-
տիճաններու կրնայ հասնիլ և հեղձուցիչ իսկ ըլլալ՝ նկա-
տելով իր դաշտին ընդարձակութիւնը, ուր արևուն ջե-
ռուցիչ ճառագայթները մեծ եռանկիւն կը բանան, նոյն-
պէս ծովու երեսէն շատ բարձր չըլլալը և խոնաւ ան-
տառներ ու ընդարձակ լճեր չունենալը։ սակայն ամառը
ամեն օր մինչև ցերեկոյ հոն փոփոխակի հնչող քաղցր
հողմերը և գեփիւռները ասոր արգելք կըլլան։ զոր իր
տեղը պիտի խօսիմք։ Ջերմութեան այս բարձր աստիճա-
նին մէջ մարդ կրնայ արևու մէջ բանի մը ժամ թեթեւ
չարժումներ ընել՝ գրեթէ առանց բրտքնելու, և այս՝ օ-
դին չորութեանը պատճառաւ կը կարծուի։ Ամենէն չոր
ու ջերմ տարիները գաղպէն իջած տարիներն են, որ
ժանկ ալ կը պատճառէ ցորեններուն և կը վնասէ։

Օգոստոս 10-էն զկնի անմիջապէս ջերմութեան աս-
տիճանը կը փոփոխուի, և բանի մը աստիճան կը պակ-
սի յանկարծ՝ բանի մը օրուան մէջ։ առանց ցուրտ բա-
մի մը իսկ փչելու կամ փոթորիկ մը ըլլալու։ և աշնա-
նային քաղցր ու զուարճալի եղանակները կըսկսին։

Սեպտեմբեր 4—10 մեծ փոթորիկ մը կը պատահի

ընդհանրապէս. և այն առաւօտներ բաց օդի ջերմութիւնը Ռէօմիւրի 4—0°-ի կիջնայ. և ընդհանրապէս սաստիկ հիւսիս կիշէ, որ երբեմն դաշտի մէջ իսկ ծխախոտ կոյն սառուցանելով՝ երկրագործութեան մեծ միասններ կ'աւտճառէ. սակայն փորձուած է որ այս ցուրտ քամոյ չառած տեղերու բոյսերը կրնան քիչ մը ապահով համարուիլ ու չմիասուիլ:

Այս փոթորիկներ անցնելէն ետքը դարձեալ քաղցր եղանակներ կը շարունակուին. և կէս օրի արևու ջերմութիւն բաց օդի մէջ Ռէօմիւրի 35°-ի կը հասնի շատ անգամ. (ջերմաչափական փորձերը միշտ բաց օդի մէջ և քամի չեղած ատեն կամ քամի չառած տեղ մը կ'աւտարուած են, ջերմաչափը միշտ գետնէն մարդաչափ բարձրութեամբ ձօղի մը վրայէն կախելով), Մակայն առաւօտներ քիչ մը ցուրտ կըլլայ և 9—11° ջերմութիւն հազիւ կը գտնուի. այստեղ ամենայնիւ շատ տարիներ (բացի փոթորիկի օրերէն) մինչև նոյեմբեր մէկը և ալ անդին կրակ վառելու կարօտութիւն չզգացուիր, նոյն իսկ սուրբ Կարապետի մէջ ալ, որ լեռ՝ ու դաշտէն 3000 ոտքի մօտ բարձր է, և ջրերու երեսն ալ գիշերներ չսառիր մինչև նոյեմբեր մէկն. և նորատունկ թթենիք ալ դեռ տերեւադարձ կը մնան. նոյնպէս քանի մը տեսակ ծառեր ալ, ջրերու մօտ գտնուած ընկուզիք կայն:

Խաչէն զկնի (սեպ. 15) դաշտի բոլոր գիւղեր առատ ցօղ կիջնայ. իսկ լեռներ բնաւ կամ խիստ քիչ քանակութեամբ: Գետեզրի գեղեր ամեն տեղերէն աւելի ցուրտ կըլլան աշնան և դարնան. և անոնց ցօղն ու եղեամն ալ առատ կըլլայ նոյն եղանակներուն: Բոլոր դաշտը և լեռանց ալ սաստիկ քամախաղ կամ քամառ չեղած տեղերը դարնանէ մինչև արևադարձ (յունիս 10) առատ ցօղ կիջնայ. որով ոստին կամ անջրդի արտեր և խոտնձներ լաւ կը բեղմնաւորին և շատ անգամ ջրարբիւններէն առատարեր կըլլան:

(Գը շարունակուի)